Հաստատում եմ՝
Դպրոցի տնօրեն _____ Շ.ՎԵՐԴՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ Բ.ԺԱՄԿՈՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ
119 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

## ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022 - 2023 ՈՒՍՏԱՐԻ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------

«---------» ----------2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Բ.Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց ՊՈԱԿ, $10^{7}$-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Աննա Հովհաննիսյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022 - 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը )** *Դասարանը բաղկացած է երեսունչորս աշակերտից: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Կոլեկտիվը ակտիվ է, աշխույժ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Չունենք դժվար դաստիարակվող աշակերտ, մեկ ծնողազուրկ: Դասարանի ավագը Ղարաբաղցյան Լիլիան է:*

*2.* **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում** *Աշակերտը կոլեկտիվի անդամ է և պահանջում է ավելի ուշադիր վերաբերմունք իր նկատմամբ: Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) : Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Ուշադրություն դարձնել, որ գրքերն ու տետրերը չկրեն ձևական բնույթ: Փորձենք դաստիարակել ոչ միայն գրագետ, այլ նաև ազնիվ, հայրենասեր, քաղաքավարի, բարեկիրթ մարդ, աշակերտ, վաղվա արժանի քաղաքացի:*

## 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*3.1* **Հոգևոր դաստիարակություն** *Աշակերտներին դաստիարակել ազգայինոգով: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

**3.2 Գեղագիտական դաստիարակություն** *Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ: Կազմակերպել զրույցներ նվիրված գրականության, արվեստի գործիչներին: Լսել աշակերտների կարծիքները գեղեցիկի մասին:*

**3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն** *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Մասնակցել համադպրոցական հայրենասիրական միջոցառումներին: Կազմակերպել քննարկումներ հայրենասիրության կրթության վերաբերյալ: Սերմանել սեր դեպի հայոց բանակը և հայ ազատամարտիկները: Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:*

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն** *Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Որպես ուղեցույց ընդունելով*

*<< Առողջ մարմնում առողջ հոգի>> թևավոր խոսքը՝ խթանել առողջության ամրապնդմանն ու ֆիզիկզկզն զարգացմանը նպաստող միջոցառումներ, օգնել ճիշտ կազմակերպել օրը:*

**3.5 Աշխատանքային դաստիարակություն** *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:*

**3.6 Բնապահպանական դաստիարակություն** *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Դասարանում ստեղծել կանաչ անկյուն, օգնել խնամել դպրոցամերձ այգին, պարտեզը:*

**4. Դպրոց-ընտանիք կապը** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն: Աջակցել դպրոց-ընտանիք կապին: Առաջացած խնդիրները քննարկել ծնողների հետ: Օրագիրն / էլեկտրոնային/ օգտագործել որպես ծնողի հետ կապի միջոց:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Դասարանն ապահովել դասագրքերով, անհրաժեշտ գույքով | 2 սեպտեմբեր 6 | աշակերտ դասղեկ |
| II | <<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք | 9 սեպտեմբեր 13 | աշակերտ դասղեկ |
| III | <<Եթե ես լինեի …>> թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները: | 16 սեպտեմբեր 20 | աշակերտ դասղեկ |
| IV | Քննարկել <<Անկախությունը իմ հայրենիքն է >> թեման: | 23 սեպտեմբեր 27 | աշակերտ դասղեկ |
| V | << Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ: | 30 սեպտեմբեր հոկտեմբեր 4 | աշակերտ դասղեկ |
| VI | << Ուսուցչի իմ իդեալը >> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ ուսուցչի մասնագիտության մասին: | 7 հոկտեմբեր 11 | աշակերտ դասղեկ |
| VII | << Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները: | 14 Հոկտեմբեր 18 | աշակերտ դասղեկ |
| VIII | << Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին: | 21 հոկտեմբեր 25 | աշակերտ դասղեկ |
| IX | << Էկոլոգիական հիմնախնդիրներ >> : Աշակերտներին | 4 | աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| | հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին: | նոյեմբեր 8 | դասղեկ |
| X | << 44 օրյա պատերազմն ու հետևանքները>> թեմայով քննարկում:: | 11 նոյեմբեր 15 | աշակերտ դասղեկ |
| XI | << Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժե համակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն: | 18 Նոյեմբեր 22 | աշակերտ դասղեկ |
| XII | Վարքի կուլտուրա << Աշակերտը դասի ժամանակ և դասամիջոցին >> : | 25 նոյեմբեր 29 | աշակերտ դասղեկ |
| XIII | << Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները: | 2 Դեկտեմբեր 6 | աշակերտ դասղեկ |
| XIV | << Շրջակա միջավայրի մաքրությունը նաև իմ խնդիրն է >> թեմայով զրույց: Էկոլոգիական արդի խնդիրները: | 9 դեկտեմբեր 13 | աշակերտ դասղեկ |
| XV | << Ազգ և պետություն >> թեմայով բաց քննարկում և վերլուծություն: | 16 դեկտեմբեր 20 | աշակերտ դասղեկ |
| XVI | << Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել: | 23 դեկտեմբեր 27 | աշակերտ դասղեկ |
| XVII | << Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները: | 13 հունվար 17 | աշակերտ դասղեկ |
| XVIII | << Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում: | 20 հունվար 24 | աշակերտ դասղեկ |
| XIX | << Լրատվամիջոցներ և կերպարներ >> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը: | 27 հունվար 31 | աշակերտ դասղեկ |
| XX | << Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները: | 3 փետրվար 7 | աշակերտ դասղեկ |
| XXI | << Թրաֆիկինգի հասարակական մեծ վտանգավորությունը>> թեմայով քննարկում և բանավեճ: | 10 փետրվար 14 | աշակերտ դասղեկ |
| XXII | << Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ: | 17 փետրվար 21 | աշակերտ դասղեկ |
| XXIII | << Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը կհասկանան թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ: | 24 Փետրվար 28 | աշակերտ դասղեկ |
| XXIV | << Ինչու է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ | 3 մարտ | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | կարիքավոր մարդկանց նկատմամբ: | 7 | |
| XXV | << Հաղորդակցության կուլտուրա >> թեմայով քննարկում; | 10 մարտ 14 | աշակերտ դասղեկ |
| XXVI | << Գնահատվող մրցույթ >> աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները կկարողանան խմբում հաջողությունն ապահովելու համար: | 17 մարտ 21 | աշակերտ դասղեկ |
| XXVII | << Նախապաշարումների ոստյան >> ներկայացնել թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել: | 31 մարտ ապրիլ 4 | աշակերտ դասղեկ |
| XXVIII | << Մեր տան մատուռն է մայրս >> զրույց նվիրված մայրության տոնին, մոր դերը ընտանիքում;: | 7 ապրիլ 11 | աշակերտ դասղեկ |
| XXIX | << Պետք է արդյոք, խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք | 14 ապրիլ 18 | աշակերտ դասղեկ |
| XXX | << Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն: | 21 ապրիլ 25 | աշակերտ դասղեկ |
| XXXI | << Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ հարգանք մարդասիրություն: | 28 ապրիլ մայիս 2 | աշակերտ դասղեկ |
| XXXII | <<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ: | 5 մայիս 9 | աշակերտ դասղեկ |
| XXXIII | << Աշխատակից ենք ընտրում >> սովորողները կհասկանան՝ թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ , այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ , որ կարևոր են բոլոր մասնագիտությունները: | 12 մայիս 16 | աշակերտ դասղեկ |
| XXXIV | Տարեվերջի ամփոփում և գնահատում; Սխալների վերլուծություն: Դասագրքերի հանձնում: | 19 մայիս 23 | աշակերտ դասղեկ |

# ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

| Անցկացման օրը | Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը | ծանոթություն |
|---|---|---|
| 20.09.22թ. | Դասախոսություն Հայաստանի երրորդ հանրապետության մասին | |
| 07.10.22 թ. | Այցելություն Երևանի պատմության թանգարան | |
| 28.11.22 թ. | Էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր – մշակութային կենտրոն | |
| 06.12.22 թ. | Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ | |
| 30.12.22 թ. | Կազմակերպել և իրականացնել տարեմուտյան միջոցառում (ցերեկույթ) | |
| 28.01.23 թ. | Դասախոսություն և ֆիլմի դիտում Հայոց բանակ թեմայով | |
| 07.03.23 թ. | Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ | |
| 07.04.23 թ. | Մայրության տոն թեմայով քննարկում | |
| 08.05.23 թ. | Հաղթանակ և պարտություն թեմայով դասախուսություն | |